

14205

Ա. ԽԵՂԻ. ԲՐՈՅՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՏԱԲՆԵՐԸ
ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

343.3
F-91

ՊԵՏՐՈՎ

1932

ԵՐԵՎԱՆ

343-3

Բ-91

Օ. յեղ Մ. ԲՐՈՅԵՆ

Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՏԱԾՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Վ. Վ. ՈՒՅԼԻՇԻԿ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՅԵՎ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ

2010



ՊԵՏՐՈՍ

1932

ՑԵՐՆԿ

19754

2001

Ա.Ռ.Ա.Զ.Ա.Բ.Ա.Ն.


Ֆրանսիայի գլխավորությամբ մի խումբ իմպերիալիստական պետությունների կողմից պատերազմի նախապատրաստության խնդիրն ընդդեմ Խորհրդային Միության այնքան ակտուալ դարձավ, ինչպես յերբեք, և իր վրա յե բնեռում ամբողջ աշխարհի աշխատավորների ուշադրությունը:

Յեթե մինչև 1928 թ. Համաշխարհային բուրժուազիան դեռ շարունակում էր հույսը դնել բայլեկիզմի «վերասերման» վրա, կապիտալիզմի մեջ «խաղաղ նեածման» և այլն, 1929 թ. սկսած, Հնդամյակի առաջին հաջողություններից հետո, ամբողջ ճակատով սոցիալիստական վճռական հարձակման անցնելուց հետո, Խորհումտեսությունների և կոլտնտեսությունների բռն աճումից և՝ համատրած կոլեկտիվացման հիման վրա, կուլակության՝ վորակու դասակարգի, վերացման անցնելուց հետո, — Համաշխարհային բուրժուազիան, նրա հետ միասին նաև բոլոր Հակախորհրդային տարրերը մեր յերկրի ներսում, սկսեցին ակտիվ պայքարի մեթոդներին անցնել ընդդեմ Խորհրդային իշխանության, ժրաշանությամբ պատրաստվելով տնտեսական շրջափակման և զինված լնորդենցիայի համար:

«Սկսած 1929 թ. աշնանից մինչև այսոր, կապիտալիստական վրձափակումն համեմատաբար արագ անմազով անցնում է ԽՍՀՄ վրա հարձակվելու նախապատրաստության հաջորդական ոտագիաները: Այդ նախապատրաստական աշխատանքն ընթանում է զանազան ուղղություններով» (Մոլոտով):

Եսու լույս հաջի առնելով մոր նոր պատերազմ սկը-

Գնտերտի տպաքան
Քրավիտ 7004 (ր)
Հրատ. 1456
Պատմեր 6341
Տիրած 4000



ԿԳԿ 84 1211

Թարգմ. Բենիկ Յեղիազարյան



4292-53

Հանձնված և արտադրության 10/II 32 թ. Ս. Ֆ. Բ.

Տպադրված և 13 մարտի, 1932 թ.

սելը՝ առանց նախապես՝ այսպես կոչված՝ հասարակական կան կարծիքը նախապատրաստելու, առանց նախապես իսրելու բանվորական մասսաներին գեղեցիկ ֆրազներով, բոլորովին անհնարին ե՝ —համաշխարհային բուժուազին բացառիկ ուշադրություն ե՝ հատկացնում հասարակական կարծիքի հատուկ մշակման, ըստ վորում Յերկրորդ ինտերնացիոնալի դերն ե՝ ուղղակի ուժանդակել բուժուազիային, ինչ վոր բավարար չափով մեջկացնեց մենշևիկներին դատելու ժամանակ:

1930 թ. սկզբում՝ ի նկատի ունենալով գյուղացիության կրօնական նախապաշտրմանը ները, կապիտալիստական յերկիրների մեծամասնության մեջ առաջ քաշվեց «կրօնի ճնշումը ԽՍՀՄ մեջ» հակախորհրդային լուգունքը։ Այսպես կոչված «խաչակրաց արշավանքի» անհաջողությունը, վորի զվարին ինքը՝ հոսմեյական պատճեր կանգնել, մեր թշնամիներին դրդեց հակախորհրդային նոր կամպանիաներ կազմակերպելու։

Ճիշեր «խորհրդային գեմալինգի» մասին և «հարկադրական աշխատանի» մասին Խորհրդային Միության մեջ—ահա թե ինչով են զբաղված տվյալ ժամանակում ֆրանսիայի, Լեհաստանի, Բելգիայի և մյաս յերկիրների բուժուական լրագրերը։

Վերջին տարին մի շարք յերկիրներում, բացի պատերազմի «բարոյական» նախատրաստությունից, մենք վկայ յենք նաև Խորհրդային Միության անտեսական շրջափակման նախապատրաստության, վորի ապացույցըն են հանդիսանում հետեյալ փաստերը։ 1) Բրիտանի, ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրի նախաձեռնությամբ, այսպես կոչված, Յելքրոպական կոմիտեյի կազմակերպումը, յելքրոպական պետությունների բլոկ ստեղծելու համար՝ ընդդեմ Խորհրդային Միության։ 2) Անգլիայում առեւտրի պաշտպանության Միության ստեղծումն անդիմական նախկին մինիստր Խիլսի գլխավորությամբ, վորը անտեսական պատերազմի բացաձակ կոչ ե անում ընդդեմ ԽՍՀՄ և 3) արգելու կամ սահմանափակող որենքները վորոնք հրատարակված են

վերջին ժամանակներս ընդդեմ խորհրդային ներմուծման ֆրանսիա, Բելգիա, Ամերիկա։

Բացի պատերազմի «բարոյական» նախապատրաստությունից և անտեսական բլոկադայիր—շրջափակման նախապատրաստական քայլերից, մենք վերջին ժամանակներս մի շարք միանդամայն անլինգելի ապացույցներ ունենք, վոր Լեհաստանի, Ռումինիայի և միքանի լիմիտով (սահմանամերձ) պետությունների ընդհանուրը՝ շտաբները՝ ֆրանսիայի լնդհանուրը շտաբի գլուխավորությամբ, զինված ինտերվենցիայի ամենաակտիվ նախապատրաստություն են տանում անլինդհատ, լիակատար համաձայնությամբ՝ գործելով ուղարկան սպիտակ և միջդրանտական կազմակերպությունների հետ։

Այսպես, լնդհանուրը շտաբների 1930 թ. նախապատրաստական աշխատանքի մասին վկայում են հետեւյալ փաստերը։

1) ԽՍՀՄ գեմն ուղղված ռազմա-քաղաքական պայմանագրերի և համաձայնությունների կնքումը ֆրանսիայի և Լեհաստանի, Լեհաստանի և Ռումինիայի միջն և այլն։

2) Ֆրանսիայի, Լեհաստանի և Ռումինիայի ռազմական բյուջեների աճման ուժեղացումը։

3) Լեհաստանի ռազմական արդյունաբերության գործարանների անլինդհատ աշխատանքը յերկրի ընդհանուր անտեսական ճնշաժամի առկայությամբ։

4) Բազմամթերքի և զենքի անընդհատ ներմուծումը և աստան և Ռումինիա, վոր պատրաստված են գլխավորական ֆրանսիայի և Զեխո-Սլովակիայի ռազմական դու ծարաններում։

5) Ստրատեգիական յերկաթուղիների և խճուղիների ուժեղացրած շնարարությունը Լեհաստանի տերրիտորիայի այն շրջաններում, վորոնք սահմանամերձ են Խորհրդային Միության։

*) Ընդհանուր շտաբ գնդալենի շտաբ.

6) Ֆրանսական սովաների անընդհատ ճամբարգում՝
թյունները լեհաստան և Ռումինիա՝ ինչական և ոռումիւն
հական բանակներին տեսչություն անելու համ հրահանու
ղելու պատրիարքակով։

7) Ֆրանսական կառավարիչ շրջանների ամելի քան
համակրական վերաբերմունքն այն սպլիտակ և միջքան-
տական կազմակերպություններին, վորոնք իրենց հա-
մար հյուրընկալ սլատապարան են գտել Փարիզում («Ա-
ռեվիտրաբդյուննաբերական» և «Համազինվորական
միտրություն»), վորոնք չեն թագցնում իրենց նախապատ-
րաստությունը Խորհրդային Միության դեմ պատե-
րազմելու համար։

8) Ֆրանսական ընդհանուր շտաբի սպաների (Ժա-
նեն, Փուանվիլ, Ռիշար) և Մուսկայում Փրանսական
պաշտոններության ագենտների ակտիվ մասնակցությու-
նը «Արդկուսակցության» գործունեյության ղեկավար-
ման մեջ (վեհապետություն, լրտեսություն, դիվեր-
սիոն ակտերի կազմակերպում)։

Եթե բոլոր նկարագրվածի վրա մենք ավելացնենք
դարձյալ լեհական կառավարող շրջանների յեռանդուն
փորձերը, իրենց ղերիշանության տակ լիմիտրոֆ
պետություններից հակախորհրդային բրոկ ստեղծելու
չուրջը, իթե մտարերենք, վոր խորհրդային կառավա-
րության բոլոր առաջարկները զինաթափության կամ
սպառագինումը սահմանափակելու մասին մերժվումը
եցին Ֆրանսիայի, Ռումինիայի և լեհաստանի ներկայա-
ցուցիչների ակտիվ աջակցությամբ, յեթե մտարերենք,
վոր լեհական մամուլի մեջ յեռանդուն կամ պանիա յե-
տարգում 1772 թվականի լեհական սահմանները վերա-
կանդնելու համար և յեթի մենք, վերջապես, ավելա-
ցնենք, վոր լեհական և ռումինական հետափույնների
լրտեսական գործունեյությունը տարեցտարի ուժեղա-
նում և, —այդ դեպքում նույնիսկ ամենահամառ լավա-
տեսների համար և կատարելապես պարզ կլինի, վոր
մենք կանգնած ենք նոր պատերազմի սահմանագծի վրա։

«Մենք հայտնապես առում ենք Խորհրդային

Միության աշխատավորներին և բոլոր յերկերների
բանվորներին, վոր խաղաղության գործի համար
վտանգն աճում ե» (Մոլոտով)։

Վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր բոլոր հակա-
խորհրդային ուժերին դիմավորում և ֆրանսիան, վոր
հետագա տակտիկայից և կախված նշանակալից չափով
խաղաղության պահպանումը։ Իզուր չեք, վոր իր ղե-
կուցման մեջ խորհուրդների VI համագումարում լին։
Մոլոտովը հայտարարեց, վոր

«Խորհրդային-ֆրանսական հարաբերություն-
ների բնագավառում բացառիկ լուրջ և ծանր սպառ-
նալիք և թագնվում ընդհանուր խաղաղության գոր-
ծի համար»։

Պատերազմի հարածուն սպառնալիքի այս սկայ-
մաններում ամեն մի աշխատավոր պետք և զգասու-
թյամբ գնահատի ամբողջ վտանգը և իրազեկ լինի մեր
թշնամիների պատերազմի համար ձեռք առած նախա-
պատրաստական միջոցներին։

Ս. և Մ. Բորյակելի «Ընդհանուր շատրներն աշխա-
տանքի վրա» գիրքը, վոր զրված և մի շարք դատական
պրոցեսների, արտասահմանյան մեր հակառակորդների
յելույթների և ուրիշ տվյալների հիման վրա, վորոնք
հայտնի գարձան խորհրդային և արտասահմանյան մա-
սուլից, —ի մի յե գումարում առանձին պետությունների
և մպերիալիստական շրջանների գինված ինտերվենցիա-
յի նախապատրաստության փորձերը՝ ընդդեմ Խոր-
հրդային Միության։

Ս.յո գրքում համախմբած են այն սուանձնակի փաս-
տերը, վորոնք խորհրդային ընթերցողին հնարավորու-
թյուն են տալիս պարզապես համոզվելու այն բանում,
վոր պատերազմի նախապատրաստությունը պարագ-
ամանակի յերեակայության պտուղ չե, խորհրդային
լրագրերի հերյուրանքներ չեն, այլ կատարելապես ոեալ
բան։

Դեռ հայտնի չե մեկ, մեր թշնամիները վա՞ր տարին
կամ ամսին են պատրաստում դինված հարձակումը

Առաջուրդների յերկրի վրա, սակայն, ինչ չափով վոր պարզվեց, վոր ընդհանուր շտաբները և իմպերիալիստական ղեկավար խմբերն արդեն նշել եյին միանդամայն վորոշ ժամկետեր, — այս գրքի հրատարակությանը ավագ մոմենտում ավելի քան ժամանակին է:

Վ. ՈՒՅՑԻԹ

ԽՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ԶԻՆՎՈՒՄ ԵՆ

Իմպերիալիստական պետություններն աշխարհում աշխատավորների առաջին պետությունը՝ ԽՍՀՄ վերջ ապաւ մաքից յերբեք չեն հրաժարվել: Խորհրդային Միության զարգացման զանազան ետապներում նրանք միայն իրենց տակածիկան եյին փոխում միջադային հանգամմանքի առկախությամբ:

Մենք հիշում ենք, թե ինչուս, յերբ մենք առաջին ինտերվենցիան հետ մզեցինք, վրա հասավ Խորհրդային հանրա գետության «ճանաչումների» շրջանը: Այդ «ճանաչումներին» ընթացակից եր տնտեսական զորեղ հրնացումը ուղղ վրա: Այդտեղ ամեն ինչ կարեն՝ ֆինանսական ըրջափակում և՝ պայքար ցարական պարտքերի հատուցման համար, Խուսաստանում յեղած նախկին ոտարյակրյա սեփականատերերի փոխհատուցման համար, առաջիւ սեփականությունը նրանց վերադարձնելու համար (Աւրելյանոս) և այն: Առանց դադարեցնելու քայլայիչ աշխատանքը նույնիսկ ԽՍՀՄ անդրիտորիայում, իմպերիալիստներն այդ շրջանում հույս ունեցին, սակայն, թե բայց կեզմի հախիցը կդա ներքին հակահեղափոխությունը և «ինազաղ կերպով» աշակցում եյին նրան բոլոր հնարակուր միջոցներով:

Վերականգման շրջանի վերջերքին, յերբ ապարդյուն յերկացին ներսի հակահեղափոխության և սոցիալիզմ կառուցող յերկրի «ներքին վերասերման» վրա դրված հույսերը, իմպերիալիստները ծանրության կենարունը նորից փոխադրում են ինտերվենցիայի վրա: Բացվում և համաշխարհային հասարակական կարծիքի կատաղի, մշակման շրջանը հոգուտ դինված հարձակման ԽՍՀՄ վրա: Հարաբերությունների խղումն Անդիայի կողմից ԽՍՀՄ հետ 1927 թ., հարձակումը մեր քաղաքական ներկայացուցչության վրա Փարիզում, հոռմե-

յական ոլսալի «խաչակրաց արշավանքը», կամ ոլանիսն ըստ դեմքեմ խորհրդային եքսպորտի և՝ վերջապես, իմակեռն ու իսկական էրի պրովակացիայով ծաղած կրնիկութիւնունույն կարգի յերկաթուղու վրա —այս ամենը միեւնույն կարգի յերեւութիւնը են:

Միաժամանակ շտառ կերպով ընթանում է կուլիսների հետևումը ասրբլող ռազմական հակախորհրդային բլոկի կազմակերպումը Սպիտակ ծովից մինչև Սև ծովը —Եկամունական ռազմական դաշինքը, «ադրաբյան կոնֆերանսները», բրիտանյան պան-Յելլոպան Փրանսական ընդհանուր շտարի հարանգիների մշտական ձամբարությունները փոքր Անտանտի և Մերձական յերկրներում և այլն; Վերջապես, 1929 թ. Ֆրանսիան և Անդղիան իրար հետ համաձայնությունը են կնքում ԽՍՀՄ ողակման յենթարկելու մասին:

Ինտերվնյայի նախապատրաստությունից հետո չի կանգնած նաև գերմանական բոլոր ուղղակիայի մի մասը: Այդ կողմից հետաքրքրական ե գերմանական այս հայտնի արդյունաբերող Ռեխբերգի պլանը, վորը դեռ 1926 թ. բանակցության մեջ եր մտել Փրանսական գըլ խավոր շտարի հետ՝ ԽՍՀՄ վոճնչացնելու մասին:

1930 թ. դեկտեմբերի 3-ին Փրանսական ընդհանուր շտարի որգան «Փրանս Միլիտեր»-ը բաց խորհրդածու համաձայնության ե դնում այդ պլանը, վորը հետեւալին ե հանդում.

Առաջին — Ֆրանսիան և Գերմանիան փոխադարձար ապահովում են իրենց յելլոպական սահմաններ և միացնում են իրենց բանակները Փրանս-գերմանական մեկ ընդհանուր համանատարության տակ, դրա հետեւ միասին՝ գերմանական բանակը պետք ե մեծանա Փրանսականի հարաբերությամբ այնպես, ինչպես 3:5:

Յերկրորդ — Լեհաստանը Դանցիլյան միջանց վերադարձնում ե Գերմանիային, վորի փոխարեն Ֆրանսիան և Գերմանիան ապահովում են Լեհաստանի այժմյան սահմանները: Յերրորդ — Ֆրանսիան և Գերմանիան

ան միասնաբար բանակցությունների մեջ են մտնում ՀԱՄՆ հետ գերմանական ռեպարացիոն վճարումներն էջեցնելու մասին:

Ռեխբերգը համարում է, վոր Փրանսական և գերմանական ծանր ու քիմիական արդյունաբերությունների շահերի ընդհանրականությունը կատարելապես ուշալ հող և հանդիսանում Փրանս-գերմանական ռազմական դաշինքի համար:

«Այլպիսի միությունը, — գրում եր Ռեխբերգը, «Բերլինյան բորսային սուրհանդապակ» լրագրում դեռ 1929 թ. սեպտեմբերի 14-ին, — վնասական ուժերի կենտրոնացում կատեղծեր բայլը իկանակի դեմ մղվող պայքարում»:

Ըստ Ռեխբերգի պլանի, այն մոմենտում, յերբ Փրանս-գերմանական ռազմական դաշինքը փաստ դառնար, ԽՍՀՄ գեմ կշարժվելին Փրանս-գերմանական բանակի միացյալ ուժերը:

«Փրանս-Միլիտեր»-ը հրապարակելով Ռեխբերգի պլանը, յեզրակացնում է.

«Յերեք Գերմանիան հանձն առնի Ռեխբերգի առաջարկած քաղաքական կուրսը, Փրանս-գերմանական դաշինքի գաղափարը կսկսի իրագործվել»:

Հասարակական կարծիքի համապատասխան նախապատրաստության ե հակախորհրդային բլոկների դարբնումին զուգընթաց, իմպերիալիստական պետությունների սպառազինումների տեղադրյալների աճումն և ընթանում պացիֆիստական Փրանսերի և «խաղաղասիրական» հայտարարությունների ծածկույթի տակ:

Վերջին 2—3 տարվա ընթացքում կապիտալիստական յերկրներում նշանակալից չափով մեծացան ուղարմական գործիքն վարժված մարդկանց կաղըրերը, թեսվեա և գետեակ գորքի թիվը պաշտոնապես չի յել աճել. իմպերիալիստների զինված զորության աճումը տեղի յեւնենում, զիմապորապես, տեխնիկական, որանավային և քիմիական մարտական ուժերի մեծացման հաջիին:

Փրանսիան, մինչողաբերազմյան ժամանակի համե-

մասությամբ, իր բանակի տեխնիկական մասերի քառակը մեծացրեց 50 %, նրա ողային նավատորմն աճեց 15 անգամ: Միենույն բանը մենք տեսնում ենք Անդլիայում, վորի ողային նավատորմը՝ ըստ մարդկանց թվի, աճեց 2 անգամ: 1914 թ. Ֆրանսիան ուներ 1.300 գնդաշիր և վոչ մի տանկ, իսկ 1930 թ.—արդեն 35.000 գնդաշիր և 2000 տանկ: Անդլիան—համապատասխանորեն՝ 900 գնդաշիր և վոչ մի տանկ և 13.000 գնդաշիր և 450 տանկ: ՀԱՄՆ—1.300 և՝ 35.000 գնդաշիր: Ֆրանսիան, Անդլիան, ՀԱՄՆ, Բարիլիան և Ճապոնիան 1922 թ. միասին ունեին 56 հածանավ, 437 տկանակիր և 153 ընդուրյանավակ, իսկ 1931 թ. նրանք՝ համաձայն սպառագինման ծրագրերի, կունհնան 222 հածանավ, 831 ականակիր և 461 սոորչըրյանավակ: Նույն այդ յերկրները 1913 թ. միասին ծախսեցին բանակի վրա 2.300 միլիոն, իսկ 1930 թ.՝ 5.700 միլիոն ոռութիւն:

Շատ անգամ ավելի բարելավվեց ոպգմատեխնիկական միջոցների վրայի: Յեթե՝ որինակ, 1917—18 թ. տանկերը մեկ ժամում 7 կլր ելին անում, այժմ տանկերի հիմնական տեսակն անում է 30—45: Յեթե հին տանկը մարում եր 75 կլր. համապարհից հետո, այժմ յանն արդեն գործում է 400 կլր. տարածության վրա: Յեթե 1918 թ. ինքնաթիւների վերջնակետ արագությունը մեկ ժամում հասնում եր 130 կլր., այժմ նա հասավ մինչև 280 կլր.: Համաշխարհային պատերազմի ժամանակ ինքնաթիւների վերջնակետ բեռնունեակությունը հավասար եր 150 կլր., այժմ նույնիսկ թեթև ոմբատարը բարձրացնում է մինչև 450, իսկ ծանրը մինչեւ 12.000 կլր և այլն: Միենույն բանը տեղի յէ ունենում նաև նավատորմի մեջ:

Ընդդեմ ԿՍՀՄ ապագա պատերազմի պլանդարմը, ինչպես հայտնի յէ, նշանակված է լիմիտրոփ յերկրների մուռմինիայի, Լեհաստանի, Լատվիայի, Լեռնահայի և Ֆինլանդիայի տերրիտորիան: Այդ պատճառով իմպերիալիստական դեկավար պետությունները, մասնավոր ֆրանսիան, ամեն տարի հսկայական միջոցներ են ծախ-

ում լիմիտրոփների զինված հղորությունը մեծացնելու վրա, ուղղելով նրանց ոպգմամթերքի անընդհատ հոսանք և ոպգմական խոչըր արդյունարերություն ստեղծելով նրանց տերրիտորիայի վրա:

Յեթե 1923 թ. Լեհաստանը, Ռումինիան, Ֆինլանդիան, Լատվիան և Աստոնիան ունեիին 15.000 գնդաշիր և 2.500 թնդանոթ, 1930 թ. նրանք արդեն ունեն 20.000 գնդաշիր և 4000 թնդանոթ: 1928 թվականին նրանց կազմային բանակները պաշտոնապես հրացանի տակ ունեիին 502.000 մարդ, իսկ 1930 թ.—611.000 մարդ կամ 20% ավելի: Իսկ «վոշ-կադրային» բանակները—զանազան «կամագորական» ոպգմա-փաշխատական միություններն ու կազմակերպությունները, վորոնք իրենց թվով շատ ավելի գերազանցում են կազմակերպին, վերջին յերկու տարվա ընթացքում ե'լ ավելի աճեցին: Այդ բանակները զանազան անուններ են կրում: Լեհաստանուժ՝ գա Պիլսուզսկու լեգիոններների «Ստրելեց» կազմակերպությունն է, վորոնք ավելի քան 500.000 մարդ ունի; զորացրված սպանների, ինթասպանների, բուրժուազիայի և կուլտուրների Փեղերացիան է: Լատվիայում—«Ինքնապաշտպանության» կուլտակային կորպուս «Այզսարգի», 35.000 մարդ: Ֆինլանդիայում—նույնապես կուլակագություն, իստական «ինքնապաշտպանություն»—«Շուցկոր», ոստանգործապես 100.000 մարդ և այլն:

Այս գույքի է: Այդ պետառթյունների տերրիտորիայի վրա ոպգմական նոր գործարանների կատաղի շենաբարություն և կոտարքում: վերջին հինգ տարվա ընթացքում նրանց քանակը յերկու անդամ աճեց: Ինչ չափով վոր Լեհաստանի և յուս լիմիտրոփների սեփական ոպգմական արդյունարերությունն ի վիճակի չերակարարելու նրանց բանակների պահանջները, Ֆրանսիան նրանց համար ոպգմա-անտեսական բազաներ և ստեղծում ուրիշ յերկրներում (ինչպես, որինակ՝ Զեխո-Ալովակայայում և Շվեդիայում) նրա համար, վորպեսպի հնարագորություն ունենա ողնել նրանց պատերազմի առաջին շրջանում:

Վայ գեռ վոչ բուրսովին լրիվ թվարը, վարանք բնուրոշում են իմաստիական զեկավար յերկրների նախապատճառության կատաղի տեմպերը նոր պատերազմների համար և, ամենից առաջ ԽՍՀՄ դեմ պատերազմի համար, ակներեւ կերպով մերկացնում են միջազգային բուրժուազիայի ցուցադրական «խաղաղաւրության» սուությունը:

Իսկ ի՞նչ ե տեղի ունենում մեր հարեանների տերիստրիաներում:

Սկսենք Գիտլանդիայից: Բաղմական մինիստրության ընթացիկ տարվա արտակարգ բյուջեն 75 միլիոն ֆինանսական մարկա ծախս և նախատեսում: Սեյմում ի պաշտպանություն այդ բյուջեյի հանդես դալով, ռազմական մինիստրի ողջական նստերմանը մատնանշեց, վոր արտակարգ վարկերը ինդրվում են ինքնապաշտպանության կանգնակերպման համար պատերազմի դեպքում և կազմում են սպառմական ուժերի ուժեղացմանը վերաբերող կառավարական հնդամյա ծրագրի մի մասը, վորի կատարումը 700 միլիոն մարկա կնսաթ: Այդպիսի ծախսի անհրաժեշտությունը պատճառաբանվում է նըրաւով, վոր պատերազմի դեպքում, մինչեւ ազգերի լիդայից զինված ողջություն ստանալը, կարող է միքանի ամիս անցնել, վորոնց ընթացքում Ֆինլանդիային անհրաժեշտ է իր սեփական ուժերովը կառավարվել:

Միլիտարիստական մոլության համար՝ վորն այժմ ալլուրմ և Ֆինլանդիան, շատ ցուցադրական և այն պարագան, վորի մեջ 1931 թ. անց եր կենում անկախության որվա տոնակատարությունը: Առանձնապես ցայտուն կերպով այդ յերեսաց «կարելյան ակադեմիական ընկերության» հանդիսավոր նիստում, վորի ցուցանակի տօնի աշխատառմ և թունդ ֆաշիստական կազմակերպությունը, վորն զբաղված է կոնֆլիկտների պլոտվակացիայով ԽՍՀՄ դեմ, լրտեսական քայլայիչ աշխատանքով Խորհրդային Միության մեջ և Խորհրդային Կարելիայի բռնալրավման նախալարատաստությամբ: Անցյալ տարի այդ կազմակերպությունն արդեն մի շաբա-

պրովակացիոն: Հարձակումներ և անցումներ գործեց ԽՍՀՄ տերրիտորիայի վրա:

Հանդիսավոր նիստում, վորտեղ ներկա ելին գետերալ Մաններհերմը, պրլանդիեր (վարչապետ) Սվյանիություղը, մի շարք մինիստրներ և լավուասյան շարժման առաջնորդները, բոլորովին բացերաց խոսվում եր հակախորհրդային պատերազմի մասին:

Մեր անելիքն այն է, —ասում ելին հոետորները, վոր մի ամբողջությամբ միացնենք ամբողջ Կարելիան և Լինինգրադի նահանգը, իսկ հետո գնանք մինչեւ Ռերալ, վորտեղ նույնակես մեր ցեղակեցները կան: Մոսկովյան իշխանությանը պետք է վերջ դնել: Պետք է աշխատենք, վոր միջազգային արշավանք տեղի ունենա բայլշնիկների գեմ: Այդ արշավանքը պետք է վերջնական բաժանման հասցնի բարբարոսական յերկիրը, վերջ դնի բայլշնիկական տիրապետության: Մենք պետք է հավաքենք բոլոր Փիններին, վորտեղ վոր կան նրանք և զինված պայքարի հրավիրենք նրանց մոսկաների գեմ:

Հետագայի վեպքերը ցույց են տալիս, վոր Փիննական Փաշիստները, Սվյանիություղի կառավարության նյութական և բարոյական աշակցությամբ, ձգտում են իրադրծել այդ զավթողական ծրագիրը: Արժե միայն հիշեցնել այնպիսի փաստեր, ինչպիսիք տեղի ունեցան 1931 թ. սկզբին. Կործանման փորձերը Փիննական այն փերմաների, վորոնք խորհրդային ասլրանք ելին վաճառում, հակախորհրդային ցույցերը մեր քաղաքական ներկայացուցչության առաջ հելսինդֆորսում, Փաշիստների արշավի նախապատրաստությունը դեպի խորհրդային սահմանը, «ինդերմանլանդական կամպանիան», վոր սւզզամ էր Լենինգրադի մարզի կուտակներին բացարձակապես պաշտպանելու կողմը և՝ վերջապես, Փիննական կառավարության մայիսի 16-ի նոտան, վորը ներկայանում էր վորպես աշկարա միջամտություն ԽՍՀՄ ներքին գործերին, վորպեսզի պարզ լինի, վոր Փիննական ազգայնական բուժությունի գործության, Փրանտա-

կան ընդհանուր շտաբի թելադրությամբ, զինված կոնֆլիկտի պրավակացիա յե անում ԽՍՀՄ դեմ:

Տեսդորեն զինվում և նաև Ռումինիան: 1931 թ. պետական բյուջեն հաստատելիս, վորը յերկարատե վիճականություններից հետո Յ ½ միլիարդ լեյով (լեյա-1,1 կոմ.) կրծառվեց, միայն ռազմական մինիստրության նախաձաշիվը նվազեցման չենթարկվեց (այն ել պետք ե ինկատի ունենալ, վոր ռազմական բոլոր իրական ծախուերի միայն ½ եր կազմում): Ռումինիայի ծովային ուժերի մասին կարելի յեր չխոսել, յեթե նրանց կազմակերպությամբ ներկայումս ուժեղ կերպով ըզդրադրվելին իմ պերթիալիստական պետությունները:

Պայքարը ԽՍՀՄ սեծովյան նախատորմի զեմ գյուրացնելու համար՝ պետություններն այժմ Ռումինիայում ռազմա-ծովային բազա յեն նախապատրաստում իրենց սեփական նախառողմերի համար, միաժամանակ հողարով նաև ուռմինական նախառորմի ուժեղացման մասին: Հանրազումարում այժմ արդեն ուռմինական նախառորմը Սև ծովի վրա նկատելի չափով մեծացավ և ամենաբնորոշն այն ե, վոր Ռումինիան վոչ թե ծովայինյա նախառորմ և ստեղծում, ինչ վոր նրա համար ամերիկ տրամարանական կենսեր, այլ պլիավորապե՞նավեր, վորոնք հեռավոր արշավանքների յեն հարմարեցված և այժմ արգեն ունի՝ որինակ, մի դիվիզիոն նախամբային ականակիրներ, վորոնք կարող են պատասխատու ռաերացիաներ կատարել Սև ծովի ստեն

Արագացրած տեմպով շարունակվում ե ծովային բազայի նախապատրաստությունը Կոնսանցայում: Բայց գրանից, ուռմինական կառավարությունը մտահոգված և նոր բազայի կառուցումով, և ոտարյերկրված բասարերուների հասուլ հանձնաժողովն անդիմական ծովակալ Զենդերսոնի, հոլանդական մասնագետ Կենենրուդի և Փրանսական ծովակալ Բասպերի կազմով գրեթե ամբողջ անցյալ տարին ուսումնասիրում եր Սև ծովի սումինական ծովափը, իրենց ընտրությունը կեն-

տրոնացնելով Պաշեռու լճի, իրեւ ամենահարմար տեղի վրա ռազմա-ծովային նոր բազա կառուցելու, վոր այդ բազան վաստակությունների վեհական միլիարդով առաջարկության հիմնական կանոնական և՝ վոր նրա չինարարության հիմնական սպատակը ուղարմական անմիջական սովառնալիք սուեդենուն և ԽՍՀՄ ծովային ուժերին Սև ծովի վրա:

Սակայն մեծ սիալ կլիներ կարծեր, վոր անդլու Փրանսական շահագրգուպածությունը ծովային կոփվների հնարավոր տեղերով սահմանափակվում է միայն Սև ծովով: Իր ժամանակին Բալտիկ ծովի միջավ ԽՍՀՄ թափանցելու նախաձեռնած փորձը, ինչպես հայտնի յե, իմպերիալիստների համար տիսուր վախճան ունեցավ, ծովի հատակում ընկած մնացին 1 հածանավ, 2 նավածովին և 3 ականակիր, 3 արայլչիկ, 3 մոտորային բարինը բայց ականակիր, 3 արայլչիկ, 3 ականակիր կատեր: Սակայն, կաս, 1 արանսազորու և 3 ականակիր կատեր: Սակայն, իմպերիալիստների վաղուց մակված պլանից՝ ծովի կողմից հարված հացնել Լենինգրադին, նրանք մինչեւրու ել ձեռք չեն քաշել. ամենքին հայտնի յեն Փրանսական և անդլիմական նոկարանների ամեն տարվա այցելությունները Բալտիկ ծովը, այն ել առանձին ուշադրություն՝ բնականորեն, հատկացվում է Ֆիննական ծոցին:

Իրենց ծովային ուժերը մեծացնում են նաև Լատվիան և Խոտոնիան: Առաջինն արգեն 5 ականակիր նաև ունի. նրանցից 4 (2 ստորջրյա նավակ և 2 խափանիչ-տրայլչերի) կառուցված են Փրանսիայում: Նառնական կամ 2 խոչը ականակիր «Եսովիկ» տիպի (ուսական նախին նավախմբային ականակիր):

Սակայն, ամենից ավելի հեշտ է իմպերիալիստական յերկիրների ընդհանուր շտաբների աշխատանքը քննել Լեհաստանի որինակով, վոր նույնիսկ ռազմական բաներուն ամփերը արդեն չեն տեղափորում բյուջեի մեջ: Գինանաների մինիստրը Մատուշեվսկին հաջեցի մեջ: Գինանաների մինիստրը Մատուշեվսկին հաջեցի մեջ:

դանց բարձր ե , բայց ուաղմական մինչստրության բյուջեն «վոչ մի կրծատման յինթակա չե» :

Ներկայումս Լեհաստանում ռազմական 20 նոր գործարան ե աշխատում (4 հրետանական , 2—պայմանական , 4—հանդերձմանքի , 3—ռազմա-ողանակավային և 1—տանկային) : Բացի դրանից , մյուս բոլոր ճենապրկությունները ռազմական նյութեր և հանդերձանք են պատրաստում : Ռազմական արդյունաբերության միջ 65 հազար բանվոր ե զբաղված : Ռազմական արտարգանքի տարեկան ծրագիրը 65 միլն . դոլար և կարգում : Յուրաքանչյուր ամիս ռազմական գործարանները 20 միլիոն գնդացրային և հրացանային փամփուշտ են պատրաստում , 18 հազար հրացան , 40 ռազմական ինքնաթիռ և այլն : Իսկ պատերազմի ժամանակի ընթացքում մեծանում ե 5 անդամ :

Միևնույն ժամանակ , չնայելով իր սեփական ռազմական ահազին արդյունաբերության առկայության , լեհաստանը գեր ռազմամթերք և ներմուծում : Ֆրանսիական հանձնաժողովով : Ֆրանսական հանձնաժողովով» : Ֆրանսական Շերբուրգ նախանդանում լեհական ռազմական բազայ յի հաստատված նյութեր զնելու համար :

Լեհաստանի արդյունաբերությունը կառուցված և իմպերիալիստական պետությունների համար ընդհանուր սկզբունքով . պատերազմն սկսվելու հաջորդ որն ամբողջ արդյունաբերությունը պետք ե ռազմամթերքի , թնդանոթների և ռումբերի արտադրության անցնելի սովորականից շատ անդամ գերազանցող խոշոր արտօդրողականությամբ : Արդյունաբերության մոմենտացիան դեկազարեկու համար պատերազմի դեպքում առեւտրի և արդյունաբերության մինիստրության մեջ հասուել ռազմական բաժին դոյություն ունի :

Այսպէս և ընթանում պատերազմի նախապատրաստություն՝ ընդդեմ ԽՍՀՄ : Յեկային թնդանոթները գերազարգություն ունի , կրահում , այլ յերեկ իմպերիալիստների ա-

խորժակի պակասությամբը չի բացատրվում , այլ անբարեկ հակասություններով իրենց իսկ՝ կապիտալիստական խմբավորումների ներսում՝ մեկ կողմից և կատական պարավելում՝ յերկրների պրոլետարական մասսաների պատավակում՝ մարդկան գիտակցության արագ աճումով և ԽՍՀՄ աճող ուժով՝ մյուս կողմից :

Վերջին հանդամանքը լավ են հաշվի առնում ընդհանուր շաբանը : Հենց այդ պատճառով ել ԽՍՀՄ գործոց գալուց առաջ ամենի բարենպատ պարագաների նախապատրաստելու համար՝ իմպերիալիստի ագենտներն ամեն միջոց ձեռք են առնում թուլացնելու նրա անսեսական հզորությունը : Ենիւ ամենալայն ծավալով կիրառվող միջոցներն այստեղ , ինչպես հայտնի է , հանդիսանում են՝ լրտեսությունը , գիվերսինին ակաները և վնասարարության կազմակերպությունը : Վնասարարների բոլոր պրոցեսներում մեղադրյալների պատկառելի կերպարանքների հետևում առկայօւմ են պատկառելի մարդկան քաղաքականության բազուք ոնորինողների —ընդդեմ ԽՍՀՄ ինտերնացիաներ վոգեսորոշների և կարմակերպողների ստվերները :

Այս զիքը լուսաբանում ե ինտերվենցիայի հենց այն նախապատրաստությունն ընդդեմ ԽՍՀՄ , վարութարվում եր նույն ինքն ԽՍՀՄ թիկունքում :

ՏԵՐՐՈՐԻՍՏ ՍՊԻԾԱԿ ԳՎԱՐԴԻԱԿԱՆՆԵՐԻ ՊՐՈՑԵՍԸ
(Ֆինմական ընդհանուր շտարի աշխատանքը)

1927 թ . Հուլիսի 4-ին խորհրդային կինորունական լրագրերում Միացյալ Պետական Քաղաքական Վարչության կոլեգիայի անունից պաշտոնական հաղորդագրություն եր տպագրված այն մասին , վոր Լենինգրադի ՄՊԲՎ . լիազոր ներկայացուցչությունը ԽՍՀՄ-ում տերրորիստական ակտեր կազմակերպելու մի կապականի փորձեր և կասեցրել , որա հետ միասին հաջողքանի ակտերի իմպերիալիստների հարձակումը վել և լիովին բաց անել տերրորիստների հարձակումը ։ Վել եր 1927 թ . ունիսի 4-ին :

1927թ. հունիսի 26-ին ՄՊԲՎ սահմանապահ ժամանելը յերեք զինված անձերի յեն բռնել լատվիական ասհմանն անցնելիս, վորոնք նախկին սպաներ դուրս յեկան—Մամոյով Վ. Ա., Սարոյել Ն. Պ. և Աղերեկան Ա. Ե. : Այդ խմբին ուղարկած ե յեղել հայական միապետականների, նախկին մեծ իշխան Ն. Ն. Ռոմանովի կողմանակիցների, փարիզյան կենտրոնը, մի չարք տերը որի համար կաղմակերպելու Լենինգրադի առանձին կուսակցականների և խորհրդային աշխատավորների դեմ: Այդ անձնավորությունները խոստովանեցին, վոր իրենք փեշակավոր լրտեսներ են և լատվիական հակածետախուզությունը սիստեմատիկորեն իրենց ողնուած եր՝ իրենց լրտեսական տեղեկությունների փոխարեն:

Նույն տարվա ողոստոսին ՄՊԲՎ Լենինգրադյան էլեկտրակայացուցությանը հայտնի յել լինում, վոր Հելինդֆորսից (Նույն վենտոնից, վորտեղից մայիս հունիս ամիսներին ԽՍՀՄ եր փոխադրված տերությունների—Ալեքսանդրի, Զախարչենկո—Շուլցի և Վոզնեսենսկու խմարկը տերը որի համար կատարելու ապատավում: Տեղեկությունները հաստատվեցին և ողոստոսի 7-ին Շույե դյուզում (Փետրովակուսի գավառ) բռնվեցին 2 տերը որի համար մասով Ա. Բ. (Վասնդելյան բանակի կապտան, ֆիննական համատակ, ՊԲՎ հայտնի, վորպես ֆիննական ընդհանուր շտաբի լրտես, մայոր Ռոզենչտրեմի ակենտ) և Սոյլսկի Ա.Ա. (ցարական նուսաստանի պետական խորհրդի նախագահի թոռը): Զերբարկալվածների մոտ հայտարերվել են ատրճանակներ մեծ քանակությամբ փամփուշտներով, մեծ ավերիչ ուժ ունեցող յերկու ոռումք, ձեռքի չորս նոնակ, մի տուփ շառաչուն սնդիդի կապսուլ և բեկֆորդյան քղեր:

Ողոստոսի 20-ին Պետրոպալովյանու մոտերքում հայտնաբերվեց զարձյալ տերը որի համար մի խումբ: Հետապնդումից փախչելիս խումբը սպանեց անտառապահ-պահպատակից, իգանովսկի գյուղից, ընկ. Բեղեշ-

կինին, իսկ ոգոստոսի 26-ին, յերբ այդ խումբը զինված դիմադրություն ցույց տվեց, վոչնչացվեց: Խըմբը անդամներն եյին՝ Սոլոլյով Ա. Վ. (գնդապետի վորդի, Դելովոյ ակումբում տեղի ունեցած պայմբումի անմիջական մասնակցող) և վոմն Շարին (նախկին սպահական միապետական): Սպանվածների մոտ կամուլիտը են ատրճանակներ՝ մեծ քանակությամբ փամպուշտներով, ձեռքի նոնակներ և ոռումքեր:

Կատարված քննության հետևանքով հաստատված է, վոր տերը որի համար կամ անդամների դեմ: Այդ անձնավորությունները խոստովանեցին, վոր իրենք փեշակավոր լրտեսներ են և լատվիական հակածետախուզությունը սիստեմատիկորեն իրենց ողնուած եր՝ իրենց լրտեսական տեղեկությունների փոխարեն:

Եթե խումբը կատարել կատարել կատարել ԽՍՀՄ մի շարք տերը որի համար կամ անդամների դեմ, պայմբեցնել Վոլկանավարության անդամների խագումբությունները, առանձին լրագրերի խմբագրությունները և շրջանային կուսկազմակերպությունները և թունավորել Հասարական և բանվորական ճաշարանները:

Զերբարկալված Բալմասովն ու Սոյլսկին սպառիչ ցուցումներ տվին այն մասին, թե ինչպես են իրենք նախապատրաստել և կատարել Լենինգրադի Դելովոյ ակումբի պայմբունը:

Այդ գործն ակնեց լավել 1927թ. սեպտեմբերի 20-ին ԽՍՀՄ Գերազույն գատարանի ուազմական կուլտիվայի արտադնաց նստաշրջանում: Դատարանի առաջը կանգնեցին հինգ միապետական, վորոնց ԽՍՀՄ եր ուղարկել նախկին Մ.Ի. Ն.Ն. Ռոմանովի միապետական կազմակերպությունը և վորոնք սերտ կապ են ունեցել անգիտական հետախուզության աղենաների

Հետո՝ սերբորիստական ականքը կատարելու և դադարնի բնույթի ունեցող տեղեկություններ հավաքելու համար։ Մեղադրյալ Բալմասովը իբրև կամավոր ծառայել է այն սպիտակ բանակում, վորոն ուղերացիաներ և կատարել Հյուսիսային ճակատում։ Տեղափոխվելով Ֆինլանդիա, նա սկսել է աշխատել միապետական կազմակերպության մեջ։ Սոյլսկին՝ գվարդիական սպայի վորդի, ապօնի և դաստիարակվել ե իր սպայի՝ սենատոր Գրենների մոտ։ 1925 թ. նա ավարտել է գիմնազիան Ֆինլանդիայում և մտել է միապետական կազմակերպություններից մեկի մեջ։ Սարոյել՝ գնդապետի վորդի, նախկին միջման, ծառայել է Կոլչակի և վրանցի բանակներում, հետագայում տեղափոխվել է Փարիզ, վրանցի և մտել է ոռուսական միապետական կազմակերպության մեջ։ Սամոլյովը՝ Յուլիչիչի բանակի մասնակից, Խուսաստանից Վեներիա փախչելուց հետո՝ մտել է միապետական կազմակերպության մեջ։ Ֆոն-Սդերկաս-Զեմսկի նաչայլնիկի վորդի, 1925 թ. ավարտել է գիմնազիան Լատվիայում։ Ենո գիմնազիա յեղած ժամանակ, ակտիվորեն աշխատել է ոռուսական միապետական կազմակերպության մեջ։

Քննությունը բավարար պարզությամբ հաստատեց վոչ միայն իրենց՝ մեղադրյալների հանցանքը, այլ և Ռոմանովների միապետական կազմակերպության տերրորիստական գործունեայությունը, վոր տարիվ և ուրա կապ ունենալով անգլիական հետախուզության հետ (միապետականների կազմակերպած սպայժունը Դելոյ ակումբում կատարվել է ստարերկրյա հետախուզական կարգակերպությունների ուղղակի առաջդրությամբ)։

Դատարանը հաստատեց, վոր աերբորիստաների այն խօսմբը, վոր զեկավարել ե պայթյունը Դելովոյ ակումբում և Մոսկվայում յեղած տան պայթյունի նախապարաստությունը, նախնական ամբողջ նախաստրաստությունը, տարիվել և Ֆինլանդիայի տերրորիստայում։ 1927 թ. անդուխոր հրդային հարաբերու-

թյունների խզումով ստեղծված լարված հանգամանքներում, Ֆինլանդիան պատսպարեց ուռւական միասներության մեջ։ Սոյլսկին համար բարեկենպաստ պայտականներին և նրանց համար հրդարացի աշխատանքի համար։

Ֆինլանդիան բազա կարձավ սպիտակ եմիդրանուների տերրորիստական գործունեայության համար՝ ընդունեած ԽՍՀՄ՝ Այդ բանը ստիպված յեղավ խոստովանելու նաև ինքը՝ Փինլանդական արտաքին գործերի մինստրուտույունը, վորը 1927 թ. սեպտեմբերին հրապարակեց հետեւյալ հաղորդագրությունը։

— Շատ յերկար ժամանակ ԽՍՀՄ մամժելը կամպանիա յեր տանում Ֆինլանդիայի գեմ նրա համար, վոր սուս եմիդրանուներին Ֆինլանդիայում իրը թե թույլ և տրվում տերրորիստական ականք նախապարաստելու, ԽՍՀՄ տերրորիստայի վրա այդ ակտերն իրագործելու համար։

Այդ հանդամանքի հետևանքով, նույնպես և այն պատճառով, վոր Արտգործ ԺԿ Մոսկվայի Փինլանդական ղետպանի ուշադրությունը հրավիրեց այդ գործի վրա, Փինլանդական կառավարությունը կարգադրեց ֆննություն կատարել։

Պարզվեց, վոր այստեղ ապրող սուս եմիդրանուներից վորանք փաստորեն ի չարն են գործ գրել պատսպարանի իրավունքը։ Այդ բանի հետեւանքով յերեք եմիդրանտի հրաման հանձնվեց արտաքսման մասին։

Դատարանում շատ հետաքրքիր ժանրամասնություններ պարզվեցին, վորոնք բնորոշում են սպիտակ գվարդիական և լրտեսական կազմակերպությունների աշխատանքը։ Այսպես, Բալմասովի ԽՍՀՄ գնալուց առաջ, Զախարչեն-Շույլցի տերրորիստական խումբն և տեղափոխվել, վոր առաջադրություն և ստացած յեղական Մոսկվայում պայթեցնել Մ.Պ.Բ.Վ. աշխաղել Մոսկվայում պայթեցնել Մ.Պ.Բ.Վ. աշխատակիցների առնը։ Վորոշ առաջադրություններ արբար ված չի յեղել—իմբին ամենալայն հարսածեռություն և

թողնվել։ Հանձնարարված է յեղել, ճիշտ և, պայմեցնել վորեե կոմունիստական ժողով կամ լրադրի խըմբագրություն։ Տերորիստները մատակարարված են յեղել ատրճանակներով, ոռութերով, նոնակներով, թյունով։ Դատարանում Բալմսովը հայտարարեց, վոր առանց Փինների աշակցության տերրորիստների վոչ մի յելույք հնարավոր չեր լինի։ Ֆինական շտաբի հետ ամենամոտիկ կենտրոնի կապի համար, հասուկ ժարդ կար—միապետական Շվեցովը։

Մեղադրյալ Սոյլսկին հայտարարեց դատարանում, վոր հետապնդման գեպօւմ տերրորիստները պետք է նահանջեին դեպի Լեհաստան, վորտեղ նրանց խոստացված եր մայորներ՝ Տալիկովսկու կամ Լիպսկու աջակցությունը։

Հետաքրքրական են յերրորդ մեղադրյալ Սամոյլովի ցուցմունքները։ Նա նույնպես Յուլենիչի բանակի ջախչախումից հետո «քաշ և յեղել արտասահմանում», յեղել և Լեհաստանում, Վենգրիայում, դրանից հետո նա լույս ե ընկել Զեխո-Սլովակիայում, հետո Գերմանիայում, Եստոնիայում, այսուղից արտաքսվել և լատվիա։ Սամոյլովը կարողացել է այցելել Մոսկվա, Լենինգրադ, Բալագոյե գեռ 1927 թ. մարտին, յերբ նա առաջին անգամ սահմանն անցալ։ ԽՍՀՄ-ից վերադառնալուց հետո՝ Սամոյլովը նամակ է ստացել Կուտեպովից, վորն առաջարկել է նրան ըրջել խորհրդային բոլոր ռահմանները, վորպեսով բացատրի, թե արդյոք պատրաստ են նրանք վորքի կանգնելու։ Առաջարկություններ եին տրված նաև ուղղմահան դորձարանների վերաբերությամբ։

—ինչո՞ւ գուք աշխատանքը միապետական կազմակերպությունների մեջ միացրիք Լատվիական հետախուզության աշխատանքի հետ, —հարց տրվեց դատարանում Սամոյլովին։

—Այլապես անհնարին եր սահմանն անցնել, հետեւ պատասխանը։

—Ապա ուրեմն, տերորիստները միաժամա-

նակ սկսամարդկում ելին նաև լնդհանուր շտաբների հետախուզական բաժննեմբ ըլին։

Պատասխանը պերճախոս լոռությունը յեղավ։

Դատարանի դատավճարի մեջ, հաստատվում է, վոր կուտեպովի զեկավարած միարվետական կազմակերպությունների և ոտարյերկրյա պետությունների հետաթյունների միացության միջն համաձայնություն գոյություն ունի, ըստ վորի կազմակերպությունների սահմանն անցներ, ըստ վորի կազմակերպությունների սահմանն անցնող անդամները ոտարյերկրյա հակահետախուզություններին վորոշ վճարով լրտեսական տեղեկություններ ելին ներկայացնում։

Գերադույն դատարանի ուղղմական կուլեգիան ապացուցված համարեց մեղադրյաների մասնակցությունը տերրորիստների մեջ և գնդակահող ընկ ուղարկելու դատապահությունը։

Տերրորիստների շարունակող աշխատանքը պատկերավորող երրկու մի վերջին շրթին, առաջ բերենք այն հայտարարությունը, վոր հարապարակեց դատարանի նիստին նախագահող ընկ ուղարկելու դատավճիուը կարգաւուց հետո։

«ՄՊԲվ. լիազոր ներկայացուցչությունը Լի՛Շում (Լենինգրադի ուղղմական ըրջանում) հազորում է ի տեղեկություն Գերադույն դատարանի նազմական կոլեգիայի, վոր այս տարվա մենամասմերի 21-ին Փինլանդական սահմանից, Կարելիայի շրջանում, զինված միապետականների մի խումբ նորից անցավ, վորոնք հրացանաձգության բռնվեցին մեր սահմանապահների հետ։ Անցնողներից յին մեր սահմանապահների հետ։ Անցնողներից մեկին հաջողվեց ծլկվել մինլանդիա, մյուս յերեկին հուսակեցին։ Սպանվածների մոտ հայտնաբերվեցին միապետական պրոկալմացիներ։ «Խոմանովիների նահատակների հետախուզակին», «արտակարգ հանձնաժողովի աշխատանքը», «ո՞վ է կառավարում Ռուսաստանը», և ատրճանակներ փամփուշտներով։

Շարունակությունը—

ւ. Ա. Ծ-ի, ՄՊԲՎ. լիավոր ներկայացության մոտ
յեղած տվյալների համաձայն, այդ խմբին փոխադա-
րել են հայտնի միավետականները՝ Սերդորոլում
բնակվող գնդապետ Գրել Գորյեվը և նրա ողնական,
հայտնի անգլիական սոցենու, միավետական Բու-
նակովը»:

Այս չափազանց կարևոր շտրիխն ավելի քան լավ
շշակեց Լիմիտրոֆ պետություններում աշխատող սպի-
տակ-գվարդիական և այլ կազմակերպությունների հա-
կածեղափոխական զործունեցության և համաշխարհա-
յին սպառերազմի բազմաթիվ լրտեսներից, տերրորիս-
ներից և պրովակատորներից խորհրդային սահմանները
անդուլ կերպով պաշտպանելու վրա աչալուրջ հսկելու
անհրաժեշտությունը։ Հետադայի դեպքերն ամբողջու-
թին հաստատեցին այդ անհրաժեշտությունը, չառ
առիթներ տալով ՄՊԲՎ հայտաբերելու իր մարտական
և հեղափոխական հռչակավոր հատկությունները։

ԵՅՇՈՆԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՅՑՆԵՐԻ ՊՐՈՑԵՍԸ

Եսաոնական ընդհանուր չտարի հետախույզական
աշխատանքի լայն թափը հաստատվեց այն ժամանակ,
յերբ հսոսնական մի շարք լրտեսական կազմակերպու-
թյուններ հայտնաբերվեցին, վորոնք գտնվել են ԽՍՀՄ
տերրիտորիայում և դեկավարվել ընդհանուր չտարի

Բաժնին կից հասունկ դասընթացըներ են հիմնվել,
վորոնք հետախույզներին ծանոթացնում ելին ԲԳկի:
ընդհանուր կառուցվածքի հետ և բարձրացնում ելին
ուրանց «տեխնիկական վորակը»։ Մարտինը կապված եր
դիվիդիանների շտաբների ովերատիվ բաժինների հետ,
վորոնց աղյուսանաները (շտաբների պետերի դեկավա-
ռությամբ և հսկողությամբ) անմիջապես դեկավարում
ելին հետախույզների աշխատանքը։

Վասականության հետ սերտ կազ սահմանող հե-
տախույզան ավագ աղենակի վրա պարտականություն
եր դրվում նոր հետախույզներ հավաքությունի վարդով։

Նրանց տեղեացնել սահմանը, վաստաթվավեր մատակա-
րարել, հսկել նրանց վերաբերմունքի վրա «գործի» հան-
դեպ և այլն։

Նարվյան ըրջանում լրտեսական ցանցի աշխատանք-
ների դիմավոր դեկավարն եր 1-ին դիվիդիայի շտարի
պետ մայոր Տրիկը։ Նրա ողնականը՝ լինֆորմացիոն
սաժնի պետ կապիտան Տոմսոնը։ Հետախույզան ա-
վագ աղենությունիցն եր, վորոնք անձամբ անցնում եր
սահմանը լրտեսության համար։ Հետո դալիս ելին այն
հետախույզները, վորոնք եստոնիայում և ԽՍՀՄ մըշ-
տապես ապրող ողնականներ ունելին։ Եստոնական ա-
շակիցները պետք ե ուղեկցելին հետախույզներին սահ-
մանն անցնելիս և իրեն կազ ծառայելին նրանց և շտա-
րի միջև։ ԽՍՀՄ ապրող աջակիցների սպարտականու-
թյունն եր ողնել սահմանն անցած հետախույզներին և
ինքնուրույն տեղեկություններ հայթայթել։

Այսպիսով, 1-ին դիվիդիայի շտարի ամբողջ լրտե-
սական ցանցը բաժանվում եր մի ամբողջ չարք հետա-
խույզական խմբերի, վորոնք իրար հետ սերտ կապերով
ելին կապված։ Սական ԽՍՀՄ-ում հետախույզական
աշխատանք եր տաճում նույնպես եստոնական 2-րդ դի-
վիդիայի շտարը, վոր տեղափորված և Յուրեկ քաղա-
քում (Դորբատում), դրա հետ միասին՝ նրա հետա-
խույզների մի մասին ԽՍՀՄ եր անցկացնում նույն Տու-
պիցը։

Շտարի հետախույզական բաժնի անելիքը՝ տեղե-
կություններ հավաքել ԲԳկի կադմակերպության և վե-
րակադմության մասին, նրա մանյովըների, զորքերի
տեղափորման, զորքերի տեղաշարժերի, յերկաթուղի-
ների, խճուղիների և գետնուղիների, նրանց նորոգման,
ավտոտրանսպորտի, ավիացիայի, ծովային նավատոր-
մի վիճակի մասին և այլն, այլև ձեռք բերել հրաման-
ներ, պլաններ, լուսանկարներ, ուղղմական հանդեսներ
և գրքեր ԲԳկի, ԲԳկն և ողային ուժերի մասին։

ԽՍՀՄ մեկնող լրտեսներին մատակարարում ելին
անցակիցը, կեղծ վաստաթվաթիվեր և եստոնական սահմա-
նադաշտական պատերը թույլ ելին տուիս նրանց սահմանն

անցնելու : Հետախոռյաները վարուշ ոսօնիկ չելին ստանում, նրանց «աշխատանքը» գործարքայնորեն եր վճարվում, նրանց տված տեղեկությունների և նյութերի արժեքավորության համաձայն : Բացի դրանից, նրանց գործունելությունն սքողելու համար, հնարավոր ձերբակալության դեպքում ԽՍՀՄ-ում, բոլոր հետախոռյաներին թույլ եր արվում անսահմանափակ քանակությամբ կոնտրաբանդ անցկացնել և տանել, վորի վաճառքից գոյացած վաստակը ծառայում եր նրանց վորպես լրացուցիչ վարձատրություն :

Միքանի հետախոռյաների վրա յեր ընկնում միապետական հակածեղափոխական կազմակերպությունների անդամանն անցկացնելու պարտականությունը : Բացի դրանից, հետախոռյաներին թույլ եր տրվում նույնականացնելու անցկացնել այն անձերին, վորոնք ցանկությունն կունենային անելքալ ձեռվ Եսութեաների ոգտին եյին գնում, իսկ ԽՍՀՄ-ից փոխորդված անձերին հետախոռյությունն ողտագործում եր իրեն հետաքրքրող գանապան տեսակի տեղեկություններ ստանալու համար :

Լրաենեներին հրահանգ եր արված—աչքից շփախցնել վոչ մի մանրունք, վոր ուազմական դործին ե վերաբերում, թեկուզ դա նրանց համար վոչ մի նշանակություն չունեցող թվա : Նրանք իրենց ձեռք բերած ամենինչ պետք ե զիտեղելին տեղեկագրի մեջ : Ուոցրած տեղեկություններ ստանալուց խուսափելու համար, ամեն մի հազորդագրություն, վոր ներկայացնում եր հետախոռյութը, միքանի անդամ ստուգվում եր ուրիշ լրաեների տեղեկանքներով : Բայրը հիմնական հետախոռյաները փոխափոխ հերթով անդնդհատ անցնում եյին սահմանը . հենց վոր վերադառնում եր մեկը, նրան փոխարինելու յեր ուղարկվում մյուտը :

Կարենը ե նշել, վոր հետախոռյաները չպետք ե սահմանափակվելին Եստոնիային կից Լենինգրադյան մարզի մասին հավաքած տեղեկություններով, այլ պետք ե տեղեկություններ հավաքելին նաև ԽՍՀՄ մյուտը ուսպ-

մական շրջանների ուազմական գործի դրության մասին, վորովհետև եստոնական հետախոռյությունը, ըստ մասնությունի Տրիկի խոսքերի, վոչ միայն իրեն համար ե տեղեկություններ հայթայթում, այլև՝ անդլիական հետախոռյության համար (եստոնական հայտնի լրաեների Դմ . Գոկիմանենի և Ա. Սնարավու ցուցմունքները) : Բայցի դրանից, ըստ նույն Տրիկի խոսքերի, լիմիտրոֆ պետությունների ուազմական հետախոռյությունները իրար հետ փոխանակում են հայթայթված տեղեկությունները :

Այդ սերտ կապը՝ անդլիական և եստոնական հետախոռյությունների միջև, հոսանքվում ե նաև նրանով, վոր անդլիական հետախոռյությունը եստոնական շատրվանի հաղորդում եր այն տեղեկությունները, վոր ինքն եր անմիջապես ձեռք բերում այն լրտեսական և հական հեղափոխական կազմակերպությունների միջոցով, վորոնց անդամները անդլիական հետախոռյության ծառաւության մեջն եյին գտնվում (մասնավորապես, անդլիական հետախոռյության այլպիս խաղենա եր Նարվա քաղաքում, 1-ին դիմիկիայի շտարի հետ սերտորեն կապված, սպիտակ գլաւդիտական գնդապետ, միապետական ֆրանկը, վորը միապետական լրտեսական կազմակերպության մեջն եր և անձամբ կապ եր պահպաննել Ն. Ն. Ռոմանովի հետ) :

Սակայն, 1-ին դիմիկիայի շտարը չեր սահմանափակվում զուտ հետախոռյական գործունելությամբ . չսարի պետ մայոր Տրիկին հանձնարարված եր իր հետախոռյաների միջոցով («Հարմարավոր» սպիտակ գլաւդիտականների գրավումով) կազմակերպել նաև դիմիկուն գործողություններ ԽՍՀՄ տերրիտորիայում :

1925 թ. ակդրբեն Ծեմելում սկսեցին հավաքադրել տեղական սպիտակ գլաւդիտականներին պայմանագրիկ Հոգատի համար, վորը պետք ե փոխադրվեր ԽՍՀՄ : 1925 թ. մայիսին այդ դիմերսիոն պլանն արդեն ակտեց ձեռվակերպվել . անդլիական հետախոռյության առաջնական գիտական գրադարանունից կազմակերպել նաև դիմիկուն գործողություններ ԽՍՀՄ տերրիտորիայում :

Հենց այդ ժամանակ մայոր Տրիկը առաջարկություն
ստացավ ԽՍՀՄ-ում մի շարք դիմերսիոն գործողու-
թյուններ կատարելու—յերկաթուղթների ողափթեցում
զինվորական եւ լրմանների անցնելու ժամանակ և անդար-
ների հրկիղում։ Մասնավորապես, լրտես Դոկկանինին
հանձնարարված եր հրկիղել Գատչինյան այսրոդրումի
անդարները, նրանց մեջը զանովող ապարատների հետը
ժիառին։ Վրա հետ մխասին՝ Տրիկը խոստանում էր
նրան, վոր ավտոմատիկ կայտուցիկ ռումբեր և գժախա-
լին մերենա կմատակարարվի նրան։ Ենթադրվում է
հրկիղումը կատարել ռումբերի տիմակիսի դասավորու-
թյամբ, մարզեսդի նրանց պայթյունից այսրոպաններին
